

Լիլիթ Մատինյան

ՈՒՄ ԷՅՆՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր - Քաղաքացիական ազգ, ազգայնական պետություն, ազգային գաղափարախոսություն, ռասա, քաղաքական վերնախավ, հասարակության ազգայնացում, ռասայական կազմ, էթնիկական ազգայնականացում:

Ռուս էթնոսի ազգային գաղափարախոսության հիմնահարցերը քննարկելու համար նախընտրելի է անդրադարձ կատարել մի քանի կարևոր հարցադրումների.

ա. Սոցիալական ո՞ր ուժն է ռուսական ազգային պետության հիմքը:

բ. Գաղափարական ի՞նչ արժեք է միասնական ժողովուրդ հասկացությունը:

գ. Ե՞րբ են մարդիկ համագործակցում իրական ազատության, հավասարության, արդարության, փոխադարձ հարգանքի սկզբունքների համաձայն:

դ. Ի՞նչ սկզբունքներով է ռուսական պետությունը փորձում կարգավորել ռուսական մշակույթի կրողի և էթնիկ ռուսի փոխհարաբերությունները հասարակության տարբեր շրջաններում:

Այս խնդիրները բավական լրջորեն ուսումնասիրվել են մի շարք քաղաքագետների, պատմաբանների կողմից: Ստորև կներկայացնենք նրանցից մի քանիսի տեսակետները:

Շատերի կարծիքով առաջին հերթին պետք է պատասխանել այն հարցին, թե ինչ յուրահատկություններ ունի ռուս էթնոսը: Տարածված կարծիք է, որ «ռուս» է համարվում «ռուսական մշակույթի» կրողը¹: Մեր կարծիքով՝ այս տեսակետը թերի է և սխալ, քանի որ առկա է անիմաստ կրկնաբանություն. ռուսը ռուսական մշակույթի կրողն է, իսկ ռուսական մշակույթը մշակույթ է, որը ստեղծվել է ռուսների կողմից: Պետք է նշել, որ ռուս նշանավոր գիտնական Ն. Բերդյաևը նույնպես համաձայն չէ այս տեսակետին. նա անում է հետևյալ դիտարկումը. «Քննադատելի է վերացական էթիկան, որը ծնում է նմանատիպ կրկնաբանություններ, ուստի կարևոր է հաշվի առնել ազգի ռասայական բաղադրիչը»²: Իսկ ամերիկացի կենսաբան Է. Մայրը նշել է. «Ենթատեսակը կամ ռասան տեսակի աշխարհագրորեն տեղայնացված ստորաբաժանում է, որը տարբերվում է նրա մյուս ստորաբաժանումներից»³: Այլ կերպ ասած՝ ռասան տեղական պայմաններին մարդու հարմարվելու ձևերից մեկն է, ինչը կարելի է ասել նաև ավանդույթի և մշակույթի, պետական կառուցվածքի, պարտքի զգացողության մասին: Այսպիսով, ըստ Էռնստ Մայրի, ազգ գաղափարը ծագման ընդհանրության մեջ է, այսինքն այս սկզբունքից հրաժարվելը առաջին քայլն է էթնոսի կազմալուծման ճանապարհին:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ էթնոսը որոշակի ձևով կազմակերպված մարդկության տարասեռ զանգված է: Փաստորեն, մերժել էթնոսի նյութական բաղադրիչը և թողնել միայն հոգևորը տանում է մոլորության: Ելնելով վերը նշվածից՝ կարող ենք եզրակացնել, որ «ազգ առանց ցեղի» հայեցակարգը, այսինքն ազգայնականությունից ռասայական թեմաները մերժողները կողմնակից են, այսպես կոչված, «քաղաքացիական ազգ» հասկացությանը և կայսերական ազգայնական պետության մոդելներին, ինչպես,

¹ St' u M. Делягин, В.Шеянов, Мир наизнанку: чем закончится экономический кризис для России?, М., ИД «Коммерсант» - Эксмо, 2009. с. 175:

² А. Кольев, Нация и государство. Теория консервативной реконструкции. М., «Логос», 2005. с. 381:

³ <http://www.specnaz.ru/article/?1169>

օրինակ, Բ. Մուսուլինի ֆաշիստական պետությունն էր, իսկ այժմ Ռուսաստանի Ղաշնությունն է փորձում դրան նմանվել: Կարելի է ճշգրիտ անվանել ռուսական էթնոսի ռասայական տեսակները, որոնք էլ կազմում են նրա «կորիզը»: Ի դեպ, ըստ Իվան Տուրգենևի՝ «Ցանկացած ռուսի մեջ կգտնես թաթար»¹ արտահայտությունը դարձել է ժամանակակից հակաժողովրդական ասացվածքներից մեկը, որ այդքան էլ ճիշտ չէ:

Ռուս ազգի առարկայական, գենետիկ պատկանելությունը որոշված է: Սակայն վերը նշված էթնիկ պատկանելության ոլորտի տարանջատման հետ կապված՝ հարց է ծագում մարդկանց բնակատեղիի վերաբերյալ: Ռուս ազգի պետական կառույցների մեջ այլազգիների ինտեգրումը առանց տվյալ ազգի սկզբունքների խեղաթյուրման և արժեքների կողմնակալության միասնական ժողովրդի հետ նրա հոգևոր ոլորտին՝ առանձին խնդիր է, որը պետք է լուծվի ազգի կառուցման գործընթացում:

Վերոնշյալ դրույթի հիմնավորման վերաբերյալ հետաքրքիր տեսակետ է հայտնում ռուս հայտնի քաղաքագետ և էթնոլոգ Է. Պաինը: Ըստ նրա՝ ազգի ռասայական հատկանիշը, որ դարձավ ազգայնական քաղաքականության մի մասը, վտանգավոր է երկրի համար, քանի որ սպառնում է «ազգայնացմանը» և Ռուսաստանի վերափոխմանը Երրորդ ռեյխի²: Է. Պաինը հանդես է գալիս քաղաքացիական, այսինքն՝ «ֆրանսիական մոդելով» ռուսական ազգի կառուցման օգտին, որի համար խթան պետք է ծառայի Ռուսաստանի «ֆաշիզացման» վտանգի գիտակցումը քաղաքական վերնախավերի կողմից: Դրանով նա արդարացիորեն նշում է, որ «նեոկայսրություն» և «քաղաքացիական ազգ» ծրագրերը, որ «քննարկում է Մոսկվայի մտավոր վերնախավը», ծայրահեղություններ չեն, այլ կայսերական մոդելի տեսակներ, ինչը չի խանգարում խոսել «քաղաքացիական ազգի» ճշմարիտ մոդելի մասին, որն արդեն կայսրության դեմ է: Սակայն նրան բնորոշ է երկու մասի բաժանված համակարգի տեսլականը, մի կողմից՝ հասարակությունը և պետությունը, մյուս կողմից՝ անհիմն հակամարտության հնարավորությունը նրանց միջև: Ավելին, նա ոչ միայն խոսում է պարտքի և սոցիալական դերերի, այլև իրավունքների ու արտոնությունների մասին: Պետք է նշել, որ Է. Պաինը իր ուշադրության հիմնական մասը հատկացնում է ազգամիջյան հարաբերություններին, այլ ոչ թե գիտակցության տարրերի կազմակերպման սկզբունքներին, որոնք չեն տեղավորվում ազգի ձևավորման առաջին փուլի մեջ: Ըստ նրա՝ այն կայանում է համայնքի գիտակցման մեջ: Նա նշում է նաև կայսրությունների՝ ազգային պետության վերափոխման փորձերի մասին, որոնք կայսրությունների անկման հետևանք են և չեն նպաստում դրանց վերականգնմանը, այլ բարդացնում են նրա գոյության հետագա ուղին: Նա որպես այլընտրանք է տեսնում քաղաքացիական ազգի կառուցումը, որտեղ քաղաքացիական հասարակությունն ունի պայմանագրային հարաբերություններ պետության հետ³:

Այսպիսով, Է. Պաինը տազնապում է Ռուսաստանի «ֆաշիզացման» «էթնիկական ազգայնացման» համար: Նա ամենաբարձր արժեք է համարում Ռուսաստանի տարածքի պահպանումը և առաջարկում է քաղաքական, այլ ոչ թե էթնիկական «ազգայնացում», որը ոչ այլ ինչ է, քան երկու աթոռներին նստելու ցանկություն. դուրս մղել պաշտոնեությանը և թողնել բնակչությանը որպես չկազմակերպված զանգված: Այսպիսով, Ռուսաստանում ազգի կառուցման տեսակետը, որ առաջարկել է Է. Պաինը, չի բավարարում ազգի կազմակերպման սկզբունքներին, հաշվի չի առնում օբյեկտիվ իրականությունը:

Այնքան էլ հասկանալի չէ Է. Պաինի, այսպես կոչված, տազնապը հասարակության «ազգայնացումից», որի պատճառով նա խուսափում մի շարք թեմաներ քննարկելուց: Այդպիսին են օրինակ, օտարազգի այն էթնիկ խմբերի իրավունքների և արտոնությունների

¹ <http://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC2253976/>

² Ст'у Э. Паин. Россия между империей и нацией. Pro et contra/M. – 2007//№ - 3. с. 42 – 57:

³ Նույն տեղում, էջ 49:

խնդիրները, որոնք վաղուց հաստատվել են Ռուսաստանի տարածքում: Ըստ նրա՝ դա կարող է ի վերջո նպաստել Ռուսաստանից որոշակի տարածքների անջատմանը:

Բացի նրանից, որ ռասաներին վերաբերող թեմաներից խուսափելը առաջին քայլն է բազմազգ պետություն ստեղծելու ճանապարհին, պետք է հիշեցնել նաև, որ մարդկային ռասաները և դրանց տեսակները գոյություն ունեն անկախ մեր վերաբերմունքից: Դա հասարակական և քաղաքական դիսկուրսում աշխարհի օբյեկտիվ պատկերի ինքնակառավարման անհիմն ընկալում է և իրականության աղավաղում, ինչը հանգեցնում է, ի վերջո, պետական համակարգի փլուզման: Բացի այդ, ինչպես նշում է Է. Պաինը, վկայակոչելով անգլիացի խոշոր քաղաքագետ և սոցիոլոգ Բենեդիկտ Անդերսոնի «երևակայական համայնքների մասին» աշխատությունը՝ պետք է ասել, որ «ցանկացած երևակայություն պետք է հիմնված լինի ինչ-որ իրականության վրա»¹, ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս «ռասայական դիսկուրսի» անհրաժեշտությունը:

Այս տեսակետը հիմնավորվում է նաև Ռուսաստանի Դաշնության ազգային կազմի բազմազանությամբ: Ժամանակակից Ռուսաստանի Դաշնությունում գոյություն ունի 21 հանրապետություն, որոնցից միայն յոթը գտնվում են Հյուսիսային Կովկասում: Ռուսաստանում ազգայնականության զարգացումը կարող է հանգեցնել վերոնշյալ հանրապետությունների էթնիկական խմբերի անջատողական շարժումներին: Այդ շարժումները կարող են ավարտվել անկախության հռչակմամբ: Եթե Ռուսաստանը անգամ հաշտվի այդ պետությունների անկախության հետ, միևնույնն է, դա ոչ մի դրական հետևանք ՌԴ-ի համար չի կարող ունենալ. կավելանան լարված գոտիները ՌԴ շրջակայքում:

Այսպիսով, ազգայնականության գաղափարախոսությունը ենթադրում է մնացած ոչ ռուս բնակչության ծուլում, ինչի հետ թաթարները (Թաթարստանի Հանրապետության ավելի քան 50%-ը), բաշկիրները (թաթարների հետ միասին կազմում են Բաշկիրստանի բնակչության ավելի քան 50%-ը), կալմիկները (Կալմիկիայի բնակչության ավելի քան 50%-ը), տուվիները (Տուվիի բնակչության 77%-ը), չուվաշները (Չուվաշիայի բնակչության 68%-ը) և այլ ժողովուրդները, հավանաբար, չեն համաձայնի: Ռուսաստանի շրջանների զգալի մասը, Հյուսիսային Կովկասի հանրապետությունների օրինակով, կդնեն ազգային ինքնորոշման հարցը: Պետք է ենթադրել, որ ժողովուրդների պահանջները կսատարվեն համաշխարհային հանրության կողմից: Անջատողական զարգացումներ անհրաժեշտ սպասելի են ոչ միայն վերը թվարկված ժողովուրդներից, որոնք կազմում են իրենց հանրապետությունների բնակչության կեսից ավելին: Համաշխարհային պրակտիկայում հայտնի են անջատողական նախագծերի բավական հաջող դեպքեր, երբ տիտղոսային ազգությունը սկզբնապես փոքրամասնություն է կազմել, օրինակ՝ Աբխազիան: Այդպիսի պայմաններում ռուսական ազգայնական գաղափարախոսության օգնությամբ երկրի բնակչությունը միավորելու Մոսկվայի հնարավորությունները քիչ հավանական են:

Ուշադրության է արժանի քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անդրեյ Սավելևի մոտեցումը ազգի պահպանման հարցում, որը առաջին հայացքից հակասական է: Սակայն եթե պահպանողականությանը տալ դրական բնորոշում, այսինքն՝ ոչ թե «փոփոխությունների մերժման գաղափարախոսություն և կարծրության հիմնավորում», այլ «սոցիումին հատուկ կառույցի մոդել», ապա տվյալ բառակապակցությունը զուրկ կլինի հակասությունից: Պահպանողականությանը հենց այսպիսի բնորոշում է տալիս Սավելևը իր «Ազգը և պետությունը. պահպանողական վերակառուցման տեսություն» գրքում, որտեղ մեջբերում է անում փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՌԴ նախկին փոխվարչապետ Դ. Ռագոզինից, որը գրում է. «Պահպանողականությունը ազգային հետաքրքրությունների, ազգային ինքնության, սեփական ճանապարհի, Ռուսաստանի

¹ Э. Паин. Россия между империей и нацией. Pro et contra/М. – 2007//№ – 3. с. 43:

սեփական դեմքի, քաղաքացիական արժանապատվության և պատմական հպարտության գաղափարախոսություն է, որը չի նվաստացնում այլ ազգություններին կոնֆլիկտներով, գոռոզությամբ ու ինքնահավանությամբ»:¹

Ա. Սավելևը (Կոլև) գտնում է, որ տարբեր էթնոսներ կապված են արյունակցական, քաղաքական, կրոնական համերաշխությամբ²: Հավատարմության այս տեսակների էությունը բացատրելու համար առանձին-առանձին ներկայացնում է, թե ինչ է նշանակում արյունակից, քաղաքական, կրոնական դավաճանություն: Արյունակից դավաճանությունը անտարբերություն է ծագման նկատմամբ, ինչը կարելի է տեսնել Ռուսաստանի Դաշնության հասարակության մեջ: Քաղաքական դավաճանությունը «հայրենիքի ժամանակակից կյանքի երկրորդ պլանի նահանջն է», այսինքն՝ կոնկրետ կառավարության քաղաքականության հետ անհամաձայնության փոխանցումը ազգի հանդեպ դժգոհությանը, ինչը կարելի է տեսնել ռուս «լիբերալների» միջև, ովքեր պատրաստ են օգնություն փնտրել արտասահմանում, որպեսզի փոխեն Ռուսաստանում քաղաքական ռեժիմը: Կրոնական դավաճանությունը ամենավտանգավորն է, քանի որ գրոյի է հավասարեցնում համերաշխության մնացած տեսակները և ըստ էության մերժում է ազգային վարքի հեթանոսական և հեթանոսությանը մոտ (աստղագուշակություն և նումերոլոգիա) հավատամքները, աղանդները, ռուսների կողմից այլ կրոնների ընդունումը: Ընդգծելով հերոսության կարևորությունը, որը դրսևորվում է ծայրահեղ իրավիճակներում, հեղինակը նախազգուշացնում է իշխանություններին ազգի հավատարմության ստուգումից, քանի որ յուրաքանչյուր այդպիսի ստուգման ժամանակ հերոսությանը անխուսափելիորեն հարակից է դավաճանությունը, այդ իսկ պատճառով է առաջարկում դաստիարակել հերոսներ, սակայն նվազագույնի հասցնել հերոսացման իրավիճակները:

Ա. Սավելևը նաև ուշադրություն է դարձնում «քաղաքացու պարտքի զգացողությանը», որը ընտրվում և կապված է բացարձակի ու սիրո հետ, ինչը տանում է դեպի ազգային դիկտատուրա, որը հակառակ է լիբերալ դեմոկրատիային և նման է ազգային ժողովրդավարությանը ու միապետությանը, որոնք սահմանափակ են Ռուսաստանի համար: Նրա կարծիքով՝ միապետության համար անհրաժեշտ է, որ պետական կառույցը ուղղահավաստ բնույթ ունենա, հասարակության կառուցվածքը՝ գույքային և կորպորատիվ բնույթ, ինչը թույլ է տալիս մասնագիտացված խմբերին իրականացնել իրենց ծառայությունը, առանց որի միապետությունը կլինի ոչ ավելի, քան ֆարս և իշխանության բռնազավթում: Նույնքան կարևոր է «աստիճան ունենալու սկզբունքը», այսինքն՝ տարրերի հիերարխիան համակարգում: Այնուամենայնիվ, ինչ կոչում էլ մարդ ունենա, բոլոր մարդիկ միասնական ու հավասար են ծառայելու իրենց իրավունքով, ինչը պետք է ապահովվի հասարակության մեջ: Ընդ որում, վկայակոչելով ռուս նշանավոր փիլիսոփա Ս. Ֆրանկին՝ նա հաստատում է, որ աշխարհիկ ծառայությունը հավատքի դրսևորումներից մեկն է³:

Պահպանողականության և լիբերալիզմի տարբերություններից խոսելով՝ Ա. Սավելևը նշում է, որ Ռուսաստանում պահպանողական հեղափոխությունը ունի չորս նպատակ. վերականգնել պատմական տարածքը, վերացնել ազգային ոգու խեղաթյուրումները (լիբերալիզմը և սոցիալիզմը), հասնել ռուսական համերաշխության, վերականգնել ազգային վերահսկողությունը:

Բացի դրանից, նա առաջարկում է այդ պրոցեսին ոչ ռուս ժողովուրդների ներգրավման տարբերակը՝ ռուս ժողովրդին ծառայելու միջոցով, որտեղ ռուս ժողովուրդը և ռուսական մշակույթը նրանց հավատամքներից վեր են, ինչը ակնհայտորեն ցուցադրված է բանակի օրինակով⁴:

¹ Ст'а А. Кольев. Нация и государство. Теория консервативной реконструкции. М.: «Логос», 2005, с. 750:

² Նույն տեղում, էջ 759:

³ Նույն տեղում, էջ 766:

⁴ Նույն տեղում:

Տվյալ տեսակետը հիմնականում հատվում է ռուս քաղաքագետ, քաղաքական գիտությունների դոկտոր Մարկ Խրուստալևի քաղաքականությունը բնորոշող շատ մոտեցումների հետ, որոնց շրջանակներում նա ներկայացնում է սոցիալական գործողություն, որն ունի 4 գործառնություն և նյութական, տեղեկատվական ու կազմակերպչական բնույթ: Ցանկացած կազմակերպչական գործունեություն վերաբերում է քաղաքականությանը, այն դեպքում, երբ տեղեկատվական բնույթի գործունեությունը ստորաբաժանվում է մշակութայինի (նրա ֆունկցիան գործողությունն է), գիտականի (զարգացում), գաղափարախոսականի (կայունություն)¹:

Այսպիսով, Անդրեյ Սավելևի մոտեցումները հաշվի են առնում ազգի ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր կողմերը: Նա իր տեսակետների զգալի մասը հատկացնում է սոցիումի կազմակերպման սկզբունքների վերլուծությանը, ձեռնարկում է օտարերկրացիների և այլադավանների ընդգրկման փորձ ռուսական ուղղափառ պետության մեջ: Նրա դիտարկումներում կարելի է նկատել որոշ հակասություններ: Նա հիմնականում զբաղվում է լիբերալ մոտեցման քննադատությամբ ազգի, պետության, կրոնի և սոցիալական հաստատությունների դիտարկումներում, խոսում է լիբերալների լեզվով և առանձնացնում է պետությունը հասարակությունից, ինչպես նրանք, ում նա քննադատում է: Այնուհետև քննադատում է գլոբալացումը, սակայն միաժամանակ խոսում է ռուսական ազգին գլոբալ ծառայելու մասին:

Սակայն պետք է նշել, որ պետությունը ռեսուրսների փոխարինման հաստատություն է հասարակական կյանքի մի ոլորտից մյուսը իշխանության միջոցով: Այդ պատճառով պետք չէ բաժանել ծառայությունը այլ էթնիկ խմբերի և ծառայությունը՝ պետությանը, եթե այն համապատասխանում է ազատության, միասնության, հասարակական կարգի, իշխանության, արդարության և հավատքի սկզբունքներին իրենց իրական էությամբ:

Ինչ վերաբերում է օտարերկրացիներին և այլադավաններին, ապա պետք է նշել ուղղափառության միավորման և միաձուլման կարողությունը, որն արդեն վաղուց է հիմնվել Ռուսաստանում: Մյուս կրոնները, վարքի տարբեր մոդելներ հաստատելուց բացի, վտանգ են ներկայացնում ազգի համար և պետք է մերժվեն: Այդ դեպքում ինչ մարտահրավեր էլ լինի ազգի առջև, ազգը պարտավոր է այն լուծել, այլ ոչ թե հեռանալ խնդրից: Այդ իսկ պատճառով անթուլատրելի է խնդրահարույց տարածքների առանձնացումը երկրից:

Ռուսաստանում ազգամիջյան մթնոլորտը իրողություն է, սակայն ռուսը չի կարող լինել ամենակարող բոլորի համար: Այդ իսկ պատճառով Ռուսաստանում հանդուրժողականություն և «կրոնների հավասարություն» չի կարող լինել, անընդունելի է: Ժողովուրդը մարդկանց թվաբանական գումար չէ:

Շատ հետաքրքիր է ժողովուրդների ձուլման վերաբերյալ տարբերակը, որն արտահայտել է տնտեսագետ, գրող և քաղաքական գործիչ Միխայիլ Դեյլագինը: Նա առաջարկում է ուշադրություն դարձնել այլ ժողովուրդների ոչ միայն կրոնին, լեզվին և էթնիկ ծագմանը, այլև մշակույթներին: Մշակութային յուրահատկությունը առիթ է դառնում պառակտման խորացմանը ոչ միայն այլադավան, այլ նաև նույնադավան, բայց տարբեր էթնիկ խմբերի միջև: Ենթադրվում է, որ այլ ժողովուրդների և մշակույթների «ռուսականացումը» «էթնիկ» հիմք չունի:

Այսպիսով, Մ. Դեյլագինի մոտեցումը կիրառելի է, սակայն չի կարելի, որ ժողովուրդը դա իմանա, քանի որ դրանով կարող են խախտվել հաստատված կարծրատիպերը և հանգեցնել հավատի փլուզմանը, ինչը կառաջացնի համակարգի սկզբունքների աղավաղում և կազմալուծում:

Հասարակության մեջ տարբեր էթնոսների փոխհարաբերության ցանկալի մեթոդների հետ կապված՝ տեղին կլինի համաձայնվել 20-րդ դարի ռուս փիլիսոփա Սեմյոն Ֆրանկի տեսանկյան հետ, որտեղ նա նշում է, որ պարտքի կատարումը առաջացնում է

¹ Ст'ю М. Хрусталева. Методология прикладного политического анализа: учеб. пособие. М.: «Проспект». 2010. с. , 85:

համապատասխան սոցիալական կարգ: Այդ դեպքում, քանի որ նոր կարգի առաջատար դասը կլինի մտավորականությունը, անհրաժեշտ է ազգայնորեն մտածող մարդկանց ներթափանցումը մտավորականության, բյուրոկրատիայի, ցանցային համակարգի բիզնեսի շարքերում:

Այսպիսով, իշխանության գլուխ բարձրանալը պետք է ունենա տեղահանման ձև, ինչը նկարագրել է ամերիկացի պատմաբան և փիլիսոփա Թ. Կունը իր «Գիտական հեղափոխությունների կառուցվածքը» գրքում: Նա գտնում է, որ հեղափոխությունը (գիտական) «գիտության զարգացման ոչ կուտակային դրվագ» է, որի ժամանակ հին պարադիգմը մասամբ կամ ամբողջությամբ փոխարինվում է նորով, որն անհամատեղելի է հնի հետ¹: Հեղինակը ցույց է տալիս քաղաքական հեղափոխության ավելի արմատական և ցավալի բնույթը, որ հանգեցնում է շատ հաստատությունների ոչնչացմանը, ինչը, իր կարծիքով, տեղի չի ունենում գիտության մեջ: Սակայն դա փոփոխության էությունը չի փոխում²:

Ուրեմն, ազգային ուժերի՝ իշխանության գլուխ բարձրանալը պետք է կատարեն իրենց պարտքը ժողովրդի հանդեպ գիտակցող ընդունակ և իրավասու մարդիկ, այսինքն՝ ազգայնականները, և պետք է պատասխանատվություն զգան ոչ թե բյուրոկրատական վերնախավի, այլ ազգի առջև: Պետք է նշել, որ ազգայնականը հետևի սոցիումի կազմակերպման ճիշտ սկզբունքներին և ուրիշներին էլ այդ անել տա, այսինքն՝ պահանջի փոխադարձություն:

Այստեղ մասնավորապես անհրաժեշտ է շեշտել միասնության սկզբունքը, որը ազգային պարտքի գերակայության հռչակումն է: Ազգայնականը պետք է միշտ նախընտրի ազգային շահը՝ առանց վախենալու ազգի թշնամիներից, այսինքն՝ կոռուպցիոներներից, անհայրենիք ու անպատասխանատու մարդկանցից: Ազգայնականը համոզված է իր իրավացիության մեջ և չի վախենում ճշմարտությունից: Ազգի թշնամիները վախենում են ճշմարտությունից, ինչպես վախենում են ուժեղ ոգի ունեցող մարդկանցից:

Այս պայմաններում հավատքը դառնում է ավելի և ավելի կարևոր :

Մ. Դեյազինը ապագայի առավել որոշակի սցենարներ է ստեղծում. գիտելիքի կուտակման արդյունքում կիջնի կառավարման գործող համակարգերի արդյունավետությունը, կառաջանա կառավարման ապարատի վերակազմավորման անհրաժեշտություն³: Ստեղծագործ մարդկանց համար անհրաժեշտ կլինի ընդհանուր լեզու, որով էլ ընդհանուր կդառնա միասնական կրոնը, որը կենտրոնացված է ոչ թե ապրելակերպի (ինչպես իսլամը և իուդաիզմը), այլ մտածողության վրա (ինչպես քրիստոնեությունը և բուդդայականությունը):

Այսպիսով, հավատքը վերջնականապես կդառնա հասարակության միասնական ուժ՝ խլելով այդ գործառույթը բյուրոկրատական ապարատից, որը կծառայի եկեղեցուն և կվերահսկվի իր կողմից, ինչը կդնի եկեղեցին պետությունից բարձր: Այժմ, երբ բյուրոկրատական ապարատը կորցնում է իր արդյունավետությունը, եկեղեցին նորից առաջին պլան է բարձրանում, ինչը նշանավորում է Միջնադարի գալուստ, որի գաղափարախոսությունն է ազգային պահպանողականությունը: Այսպիսով, այն, ինչ թվում է վերադարձ դեպի անցյալ, թռիչք է դեպի ապագա:

Այս պայմաններում զգալի փոփոխություններ է կրում ուղղափառ քրիստոնեությունը որպես Ռուսաստանի հիմնական կրոն: Ազգայնականությունը ենթադրում է ազգային հանդեպ կրոնական գործոնի երկրորդական լինելը: Եվրոպայում ազգային պետությունների ստեղծումը համընկավ բարեփոխումների հետ, մի շարք երկրներում ձևավորվեցին ազգային բողոքական եկեղեցիներ: Ազգային անկախ եկեղեցիներ ունեն

¹ Т. Кун, Структура научных революций. М.: изд-до АСТ, 2001. с. 129-130:

² Սույն տեղում, էջ 130:

³ М. Десягин, В.Шеянов, Мир наизнанку: чем закончится экономических кризис для России? М.: ИД «Коммерсант» - Эксмо, 2009. с. – 20-21:

ասորիները, հայերը և այլ ժողովուրդներ: Սակայն ուղղափառ քրիստոնեական ավանդույթներին դա հատկանշական չէ: Որպեսզի եկեղեցին ընդունի ազգայնականության գաղափարախոսությունը, անհրաժեշտ է, որ նա իջնի մինչև ազգային ավանդույթների մակարդակը, ինչն արդեն տեղի է ունեցել Եվրոպայի ազգային պետությունների մեծ մասում: Ազգայնականների տեսանկյունից Ռուսական ուղղափառ եկեղեցին պետք է ընդգծի ռուս ժողովրդի յուրահատկությունները, առանձնացնի նրան մյուսներից (ինչպես Կիևյան պատրիարքարանը Ռուսահայի անկախության խորհրդանիշն է Մոսկվայում):

Ամփոփելով, կարող ենք նշել, որ Ռուսաստանում ազգային գաղափարախոսության մեջ առկա են մի շարք բարդություններ: Որոշ ռուս քաղաքագետներ փորձում են ռուսական մշակույթը տեղափոխել կրոնական հարթություն: Այս դեպքում էլ առկա են խնդիրներ, որոնցից կարևորագույնը ռուս ուղղափառ կրոնի գաղափարական որոշակի փոփոխություններն են, որոնք հանդիսանում է ռուս ազգայնականների գաղափարախոսության հիմնասյուներից, քանզի նրանք կրոնը երկրորդական են համարում ազգային գաղափարախոսության մեջ: Ռուս էթնոսի ազգային գաղափարախոսության յուրահատկությունները ուսումնասիրելիս կանգ առանք ազգային ինքնաձանաչողության մեթոդաբանական այն կողմնորոշիչների վրա, որոնք էական նշանակություն են ստանում հատկապես անցումային ժամանակաշրջանում: Ազգային գաղափարախոսությունը ինքնապաշտպանական բնագծի կանոնակարգում է, որը հատուկ է յուրաքանչյուր ազգի և ընդունելի էթնոսի մեծամասնության կողմից: Ռուս ազգի պարագայում ազգային գաղափարախոսությունը ունի էթնիկ, քաղաքական, կրոնական մի շարք յուրահատկություններ, որոնց էլ անդրադարձ կատարվեց հոդվածում:

Лилит Матинян, Особенности национальной идеологии русского этноса -

В сфере современных этно-культурологических исследований аналитический подход и обсуждения вопросов носителей культуры конкретного народа и этнической идентичности представляют особый интерес. За последние десятилетия в постсоветском культурном многообразии термин “носители русской культуры” нашел широкое распространение. Данная работа посвящена интерпретации этого определения с одной стороны и его отношения к вопросам русской этнической идентичности – с другой. В результате взаимоотношений между этими двумя, на первый взгляд не особо отличающимися реалиями, формируется национальная идеология русского этноса, на котором и строится ось государственной внутренней политики. В работе делается также ссылка на влияние религиозного аспекта и на откровенные попытки православной церкви приспособиться к русской национальной идеологии в последнее время

Lilit Matinyan, Peculiarities of the national ideology of Russian ethnicity – In the sphere of modern ethno-cultural investigations analytic approach and discussions of the issues of “bearers of a certain nation’s culture” and ethnic identity are of special interest. The term “bearers of the Russian culture” became very common during the recent decades in the post-soviet cultural diversity. The present work addresses to the interpretation of the mentioned term on one hand and its relations to the issues of the Russian ethnic identity – on the other. The interrelations of the mentioned realities, which barely vary at the first sight, form the national ideology of the Russian ethnicity. The latter constitutes the axis of the state internal policy. The paper refers also to the impact of the religious aspect and candid essays of the Orthodox Church to accommodate the Russian national ideology recently.

Լիլիթ Մատինյան – ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների ամբիոնի հայցորդ, դասախոս: